Известия АН Армянской ССР, Науки о Земле, 3, 97—100, 1971

ԳԻՏԱԿԱՆ ԽՐՈՆԻԿԱ

Գ. Ս. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ռ. Ա. ՎԱՆՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1970 թ. հունիսի 24-ից 26-ը Երևանում կայացավ Հայկական աշխարհագրական ընկերության 2-րդ համագումարը։

Բացման խոսքով, ՀՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ Ս. Ս. Մկրտչյանը ողջունեց համագումարը և նշեց, որ ներկա 1970 թ. Հայկական աշխարհագրական ընկերությունը տոնում է իր 35-ամյակը։ Անցած տարիների ընթացքում ՀԱԸ մեծ աշխատանք է կատարել աշխարհագրական գիտության մասնայականացման և նոր հետազոտությունների ուղղությամբ։ Ս. Ս. Մկրտչյանը հույս հայտնեց, որ Սովետական Հայաստանի տերիտորիայի գիտական աշխարհագրական հետազոտություններն այսուհետև ավելի կընդլայնվեն թե ԲՈՒՀ-երում ու գիտահետազոտական հիմնարկներում, և թե ՀԱԸ-ում։ Դրա լավագույն առհավատչյան է արդեն կատարված աշխատանքները և քարտեզագրական նոր լաբորատորիայի կազմակերպումը։

Համագումարը մեծ ուշադրությամբ լսեց ՀՍՍՀ Պետպլանի տնտեսագիտության ու պլանավորման ինստիտուտի դիրեկտոր, պրոֆեսոր Մ. Հ. Ադոնցի զեկուցումը «Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղղությունները և Հանրապետության աշխարհագրագետների խնդիրները» թեմայով։ Ինստիտուտում մշակվում է ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացման կանխատեսումը 1980 և 2000 թվականների համար։ Հանրապետության արդյունաբերության հիմնական ճյուղերից՝ էներգետիկան զարգանալու է ջերմային ու ատոմային էներգիայի մեծ տեսակարար կշռի պայմաններում։ Արագ թափով զարգանալու են նաև գունավոր մետաղաձուլությունը, քիմիական ու մեքենաշինական արդյունաբերությունները։ Տեղական բարձրորակ երկաթահանքի բազայի վրա կստեղծվի Հանրապետության համար նոր՝ սև մետաղաձուլությունը։ Գյուղատնտեսությունը պետք է ընթանա հողագործության ու անասնապահության բարձր ինտենսիվության ուղղությամբ։ Ինստիտուտում կատարվում են նաև հաշվարկներ հեռանկարային այդ ժամկետների համար Հանրապետության բնակչության աճի և զարգացման վերաբերյալ։

Հեռանկարային պլանավորման այդ աշխատանքներում մեծ անելիքներ ունեն մեր աշխարհագրագետները։ Նրանք պետք է ավելի մանրամասն ուսումնասիրեն Հանրապետության բնական պայմաններն ու բնական ռեսուրսները, տան նրանց տնտեսական գնահատականը, ճշտեն տրնտեսական շրջանների սահմանները, ուսումնասիրեն բնակչության տեղաբաշխման և միգրացիոն պրոցեսների պրոբլեմները և այլն։

Համագումարի առանցքային զեկուցումներից էր ՀԱԸ պրեզիդենտ պրոֆեսոր Ա. Բ. Բաղդասարյանի զեկուցումը «Աշխարհագրական գիտության պրոբլեմները և աշխարհագրական հետազոտությունները Սովետական Հայաստանում» թեմայով։ Զեկուցողը նշեց սովետական աշխարհագրական գիտության զարգացման հիմնական ուղղությունները՝ աշխարհագրական թաղանթի և նրա առանձին բաղադրիչների բաղմակողմանի ուսումնասիրությունը թե՛ վերլուծական և թե՛ սինթետիկ տեսակետից։ Այդպիսի կոմպլեքս հետազոտությունները պահանջ են առաջադրում կիրառել ուսումնասիրությունների նոր մեթոդներ (մաթեմատիկական, քանակական և այլն), օգտագործել ուսումնասիրությունների մեջ նորագույն տեխնիկան։ Սովետական աշխարհագրության զարգացման ուղղությունը իր արտահայտությունն է գտել նաև Հայկական ՍՍՀ աշխարհագրական ուսումնասիրություններում։

1958 թ.-ից սկիզբ դրվեց Հանրապետության տերիտորիայի աշխարհագրական սիստեմատիկ ուսումնասիրություններին։ Մեծ աշխատանք է տարվել Հանրապետության կլիմայի ուսումնասիրությունների գծով։ Հրատարակվել են երկու խոշոր մենագրություններ, ինչպես նաև մի շարք աշխատություններ կլիմայի առանձին տարրերի և կլիմայական ու ագրոկլիմայական շրջանացման վերաբերյալ։ Կատարվում են լանդշաֆտային խոշոր մասշտաբի ուսումնասիրություններ։ Մեծ ուշադրություն է նվիրվում սողանքների, սելավների և լանջային այլ պրոցեսների ուսումնասիրությանը։ Շուտով լույս կտեսնի Հանրապետության ֆիզիկական աշխարհագրությանը նվիրված առաջին գիտական մենագրությունը (հայերեն լեզվով)։

Նշանակալի աշխատանքներ են կատարվում տնտեսական աշխարհագրության ուղղությամբ։ Զեկուցողը կանգ առավ հատկապես հանրապետության տերիտորիալ-արտադրական համալիրների և արդյունաբերական հանգույցների ուսումնասիրությունների վրա, նշեց էներգա-արտադրական ռիկների մեթոդի ուրվագիծ տնտեսական քարտեզագրման նոր մեթոդի կիրառման նշանակությունը։ Մայրենի լեզվով հրատարակված է հանրապետության տնտեսական աշխարհագրությանը նվիրված մենագրություն։

Հայկական ՍՍՀ աշխարհագրագետների աշխատանքներում որոշակի տեղ է գրավում թեմատիկ քարտեզագրությունը։ Հայկական ՍՍՀ ատլասի հրատարակումից հետո կազմվել են Սովետական Հայաստանի բնական պայմանների և բնական ռեսուրսների բազմաթիվ քարտեզներ։ Դրանք մեծ կիրառություն են գտել պլանավորող և արտադրական կազմակերպությունների աշխատանքներում։ Ավարտված է հանրապետության կլիմայական ատլասը։ Նախապատրաստական աշխատանքներ են տարվում Սովետական Հայաստանի ազգային երկհատորանոց ատլասի ստեղծման ուղղությամբ։ Անցած տարիներում լույս են տեսել հայերեն լեզվով աշխարհագրության դասագրքեր ու ձեռնարկներ ԲՈՒՀ-երի և դպրոցների համար։ Կազմվում է տեղանվանագիտական բազմահատոր բառարանը։

Հանրապետությունում աշխարհագրական կրթության հարցերին նվիրված հատուկ զեկուցումով հանդես եկավ համագումարում ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստր ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Տ. Ասլանյանը։ Նա նշեց, որ ժամանակակից գիտության և տեխնիկայի արագ զարգացումը պահանջ է առաջադրում վերակառուցել բնական գիտությունների ուսուցման սիստեմը։ Միջնակարգ դպրոցում անհրաժեշտ է ուժեղացնել աշխարհագրության ուսուցումը, վերանայել ուսումնական ծրագրերը և ձեռնարկները։ Անհրաժեշտ է ուժեղացնել աշխարհագրական կադրեր պատրաստող ֆակուլտետների գիտատեխնիկական բազան, լայնորեն ներդնել հաշվողական տեխնիկան։

ՀՍՍՀ բնական պայմանների և բնական ռեսուրսների աշխարհագրական ուսումնասիրության ու կանխատեսման արդի պրոբլեմներին զեկուցումով հանդես եկավ աշխարհագրական գիտությունների դոկտոր Լ. Հ. Վալեսյանը։ Նա կանգ առավ հատկապես տերիտորիայի՝ որպես բնական ռեսուրսի գնահատման հարցի վրա։ Առաջարկեց գնահատել տերիտորիայի որակական հատկանիշները, որոնք որոշվում են մորֆոլոգիական, մորֆոմետրիական, ինժեներա-երկրաբանական և այլ առանձնահատկություններով։ Զեկուցման մեջ փորձ է արվում տալ բնական ռեսուրսների առանձին խմբերի որակական և քանակական բնութագրությունը։

Ընկերության 1964—1970 թթ. գործունեության մասին հաշվետու զեկուցումով հանդես եկավ գիտքարտուղար Ռ. Հ. Վանյանը։ Հաշվետու տարիներում ընկերության աշխատանքներում կարևոր տեղ են գրավել աշխարհագրական գիտության պրոպագանդումը մասսաների շրջանում, շրջանային բաժանմունքների ստեղծումը և ամրապնդումը, ինչպես նաև գիտահետազոտական ու քարտեզագրական աշխատանքները։ Նշվեց, որ մինչև 50-ական թվականները ընկերության գործունեության մեջ գերակշռել է դիտության պրոպագանդան, իսկ հետագայում, կապված աշխարհագրական բուհի ստեղծման հետ, նաև՝ գիտահետազոտական և քարտեզագրական աշխատանքները։

Ընկերության ապարատի աշխատողների միջոցով կազմակերպվել են ֆենոլոգիական, լանդշաֆտագիտական և ագրոկլիմայական թեմատիկ ուսումնասիրություններ։ Պատրաստ է տպագրության հանրապետության ֆենոլոգիական օրացույցը և աշխարհագրական անունների բառարանի 2-րդ, լրացված հրատարակությունը։

Տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների պատվերով պայմանագրային կարգով կատարվել են բազմաթիվ քարտեզագրական և գիտահետազոտական աշխատանքներ։ Ընկերության միջոցառումների շնորհիվ հանրակրթական դպրոցներում ծավալվել են հայրենագիտական ուսումնասիրությունները, կազմակերպվել են հայրենագիտական դպրոցական թանգարաններ և բազմաթիվ խմբակներ։ 1970 թ. հունվարին հրավիրվեց Հայրենագիտական հանրապետական առաջին գիտապրակտիկ կոնֆերանսը, որի նյութերը պատրաստվում են տպագրության։

Զգալի չափով հարստացել է ընկերության գրադարանը մասնագիտական գրքերով, ժողովածուներով, քարտեզներով, ատլասներով։

Կազմակերպչորեն ամրապնդվում են ընկերության 31 շրջանային բաժանմունքները, որոնք վերջին 3 տարվա ընթացքում ընկերության շարքերն են ընդունել մոտ 569 անդամ։ Այդ բաժանմունքներին օգնություն և օժանդակություն ցույց տալու գործում մեծ են ընկերության սեկցիաների անելիքները։

Համագումարը լսեց նաև ընկերության վերստուգիչ հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Աբրահամյանի հաշվետու զեկուցումը։ Անցյալ հնգամյակում ևս Հայկական աշխարհագրական ընկե-

ության գործունեությունն ընթացել է աշխարհագրական գիտելիքների պրոպագանդման ու տարածման, բարձրագույն և մանավանդ դպրոցական աշխարհագրության կրթությանն օժանդակելու և գիտահետազոտական աշխատանքների ուղղություններով։ Վերջին տարիներին գիտահետազոտական աշխատանքների ծավալը ավելի է մեծանում և տրամադրված ֆինանսական միջոցները 5 տարվա ընթացքում աճել են, միայն բյուջետային հատկացումների գծով, ավելի քան երեք անգամ։

Գիտահետազոտական աշխատանքները կատարվում են հաստիքային երկու կրտսեր գիտաշխատողների և գիտքարտուղարի կողմից։ Դրանց արդյունքներն են հանդիսացել երեք դիսերտացիաներ, որոնցից մեկը հանձնված է պաշտպանության, մեկը՝ պատրաստ է ներկայացվելու։

Ընկերության նախագահությանը կից գործում են 14 առանձին սեկցիաներ և հանձնաժողովներ։ Պետք է նշել, որ դրանց մի մասը գործում է ոչ սիստեմատիկ. Համեմատաբար լավ են կազմակերպված աշխատանքները ֆիզիկական աշխարհագրության, շրջաշրջանաբանական, բժշկական աշխարհագրության, հայրենագիտության և տուրիզմի սեկցիաներում, ինչպես նաև տոպոնիմիկայի և աշխարհագրական գիտական տերմինոլոգիայի հանձնաժողովում։ Սեկցիաների աշխատանքների անբավարար դրվածքը բացատրվում է գիտխորհրդի թույլ հսկողությամբ։

Ընկերության անդամների մոտ 20%-ը գիտաշխատողներ են, ըստ մասնագիտությունների՝ ճնշող մեծամասնությունը աշխարհագրագետներ։ Կան նաև երկրաբաններ, կենսաբաններ, պատմաբաններ, տնտեսագետներ և այլն։ Վերջին տարիներին մեծ աշխատանք է կատարվել նոր անդամների ընդգրկման ուղղությամբ։ Առանձնապես պետք է նշել շրջանային բաժանմունքների կազմակերպումը։ Այդ բաժանմունքների մեծ մասը դեռևս նոր է և անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն նվիրել դրանց։

Ընկերությունը վերջին տարիներին որոշակի հաջողություններ ունի հրատարակչական աշխատանքների ուղղությամբ, որն անհրաժեշտ է ավելի ուժեղացնել։ Ցուցենք բնության երևույթները և հանրապետության բնական հուշարձանները մասայականացնող գրավոր և պատկերազարդ հրատարակությունները։

Ընկերությունը կազմակերպում է նաև դաշտային ուսումնասիրություններ, թե ինքնուրույն և թե մասնակցելով, իրեն պլանով, աշխարհագրության բաժնի արշավախմբերին։ Մեծ աշխատանք է կատարվել տեղերում կամավոր ֆենոլոգ դիտողների մի սովար խումբ ստեղծելու ուղղությամբ։

Սերտ կապեր են հաստատված Սովետական միության, ինչպես նաև արտասահմանյան շատ երկրների աշխարհագրական ընկերությունների հետ։

Մեծ աշխատանք է կատարել գրադարանային խորհուրդը գրքային ֆոնդի հաշվառման, կանոնավորման ու լրացման ուղղությամբ։ Դրա շնորհիվ համեմատաբար լավ է գրքային ֆոնդի օգտագործումը ընկերության անդամների և ոչ անդամների կողմից։ Այնուամենայնիվ գրադարանային սպասարկումը խիստ դժվարանում է շենքի բացակայության պատճառով։ Այդ հարցը ընկերության աշխատանքներում տեղ գտած թերություններից կարևորագույնն է։

Ընկերության ֆինանսական միջոցները կազմվում են բյուջետային հատկացումներից և պայմանագրային ու հատուկ դումարներից։ Բյուջետային հատկացումները հաշվետու ժամանակամիջոցում աճել են երկու անգամ և ընթացիկ տարում կազմել են մոտ 14 հազ. ռ. Պայմանագրային դումարները յուրաքանչյուր տարի փոփոխվում են, սակայն 15—20 հազ. ռ. պակաս չեն լինում։ Ընդհանուր առմամբ, ընկերության ֆինանսական վիճակը բավարար է և հնարավորություն է ընձեռում կատարելու պլանով նախատեսվող աշխատանքները։

Հայկական աշխարհագրական ընկերության գործունեությունն էլ ավելի բարձր հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է՝ Հայկական ՍՍՀ ԳԱ նախագահության միջոցով լուծել ՀԱԸ շենքի՝ հատկապես գրադարանի հարցը։ Ավելի նպատակասլաց դարձնելու տեղական կազմակերպությունների գործունեությունը դպրոցական աշխարհագրության և հայրենագիտության ուղղություններով։ Արմատապես վերակառուցել սեկցիաների և հանձնաժողովների աշխատանքները, նրանց դարձնելով ընկերության գործունեության հիմնական օղակները։ Ընկերության հրատարակչական գործունեությունը կարելի է ընդլայնել, ամփոփելով առաջին հերթին սեկցիաներում կատարվող աշխատանքները։ Ցանկալի է լույս ընծայել ոչ միայն պարբերական գիտական ժողովածուներ։

Աշխարհագրական գիտությունների թեկնածու Ա. Ա. Ասլանյանի զեկուցումը նվիրված էր հայ խոշոր աշխարհագրագետ, բանաստեղծ և պատմաբան Ղևոնդ Ալիշանի ծննդյան 150-ամյակին։ Զեկուցողը համառոտակի բնութագրեց Ալիշանի կյանքի և գիտական գործունեության հիմնական դրվագները։

Հայկական աշխարհագրական ընկերության երկրորդ համագումարում աշխույժ քննարկման ենթարկվեցին կարդացված զեկուցումները, հատկապես աշխարհագրական ուսուցման և կադրերի պատրաստման հարցերը։

Համագումարն ընտրեց նոր գիտական խորհուրդ 25 անդամներից։ Ընկերության պրեզիդենտ վերընտրվեց պրոֆեսոր Ա. Բ. Բաղդասարյանը։

ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ

Ստացված է 26. XI. 1970

Технический редактор Л. А. АЗИЗБЕКЯН

ВФ 03570. Подписано к печати 29/VI 1971 г. Тираж 1035 экз. Изд. 3546. Заказ 136.
Формат бумаги 70×108¹/₁₆. Печ. л. 6,25. Бум. л. 3,13. Усл. печ. л. 8,75.
Уч. изд. л. 7,27

Типография Издательства АН Армянской ССР, Ереван, Барекамутян, 24